

## ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ամեն անասուն իր թշնամին ունի: Բնութիւնը իբրեւ պաշտպանութեան գէնք անոնց տուած է, ինչպէս գիտենք, եղջիւրներ, սուր ակօսներ, փուշեր, թոյներ եւ տարօրինակ գգեստներ:  
ՄԱՐՄԻՆ ԾԱԾԿՈՅԹԸ

Բոլոր անասուններու մարմինը ծածկուած է մորթով: Մորթը կը պաշտպանէ կենդանիին մարմինը: Անասուններուն մարմինը կրնայ ծածկուած ըլլալ *մուշտակով, ստելով, փետուրով, թեփերով* եւ *թանձր ու կարծր մորթով*:

Հետեւեալ կենդանիներու մարմինը ծածկուած է:



Գծէ՛ կենդանիի մը պատկերը

Մարմինը ծածկուած է .....



Մուշտակն ու փետուրը կենդանիներուն մարմինը կը պաշտպանեն ցուրտէն ու տաքէն:

Կրիային ծածկոյթը հաստ եւ կարծր պատեան մըն է, որ կօտ կը կոչուի:

Գիշատիչ անասունները չեն կրնար կրիային պատեանը խածնելով դիւրաւ վնաս հասցնել:



Օձին մարմինը ծածկուած է թեփի նման կարծր մորթով: Հետեւաբար, երբ օձը սողայ, անոր մարմինը չի փերթւի: Օձին մորթը կը պահէ մարմնին խոնաւութիւնը: Օձը սողուն մըն է, հետեւաբար անդամներ, այսինքն՝ քար ու ոտ չունի:



Անասուններուն մարմնին ծածկոյթի գոյներն ու գիծերը կ'օգնեն անասուններուն պաշտպանուելու համար *գիշատիչ* անասուններէ կամ *գազաններէ*: Գիշատիչ անասունները կը սնանին ուրիշ անասուններ որսալով:



Գիտէ վերի պատկերին մէջի գորտին գոյնը, որ կը յարմարի անմիջական շրջապատին: Այս երեւոյթը *ֆոդարկում* կը կոչենք: Քոդարկումը անասունին կ'օգնէ, որ պահուրտի եւ դիւրաւ չերեւի:

Վագրին մարմնի ծածկոյթի գոյնը եւ գիծերը կ'օգնեն, որ ֆոդարկումի շնորհիւ վագրը դիւրաւ աւելի մօտենայ իր որսին:

Բոլոր անասունները իրենց միջավայրին համապատասխան մարմնի ծածկոյթ չունին, որպէսզի ֆոդարկումի միջոցին պաշտպանուած ըլլան *գիշատիչ* անասուններէ, ուրեմն, ինքնապաշտպանութեան համար ստիպուած են պահուիլ կամ արագ վագելով փախչիլ:



Գազանները՝ առիւծը, վագրը, գայլն ու աղուէսը եւայլն միս գտնելու համար ստիպուած են որսալու: Այս գազանները կ'որսան եւ կը յօշոտեն ուրիշ կենդանիներ, ինչպէս՝ եղնիկ, վագերաձի, նապաստակ, թռչուն եւայլն:

Գազաններու թաթերը վերջացած են սուր եւ գօրեղ նանկերով: Անոնք ունին ուժեղ ծնօտներ եւ սուր ակոսներ:

Գիշատիչ թռչունները, ինչպէս՝ արծիւր, բազէն, ուրուրը, բուն եւ ուրիշներ, բոլորն ալ միտով կը սնանին եւ որսորդ թռչուններ են: Գիշատիչ թռչուններուն ոտները ունին ուժեղ եւ սրածայր նանկերով վերջացած երկար մատներ, որոնք մագիլ կամ նիրան կը կոչուին: Անոնք կ'ունենան նաեւ կեռ եւ շատ ուժեղ կտուցներ:





Մկնարջը լեռներուն մէջ բնակող տեսակ մը ան-  
նէտ է: Ան մաս կը կազմէ կրծողներու խումբին:

Մկնարջը երբ վտանգ մը գգայ, կը նշայ ուրիշ  
մկնարջներ ալ գգուշացնելու համար, արագ մը  
կը վագէ ու կը պահուի իր *որջին* մէջ:

Մկնարջը կրնա՞յ ապրիլ խոտ կամ բոյս գոյու-  
թիւն չունեցող միջավայրին մէջ. այո ոչ:

Ինչո՞ւ.

.....:

Պահ մը ենթադրեմք, որ անասուն մը չկրցաւ  
փախչիլ կամ պահուիլ գիշատիչ անասունէ մը:  
Գիտե՞ս, ինչ ձեւերու կը դիմէ գիշատիչներէն  
պաշտպանուելու համար:

Կարգ մը անասուններ «դերասաններ» են:

Երբ շուն մը կատուի մը վրայ յարձակի, կատուն ի՞նչպէս կը դիմադրէ:

Դաշտամուկը օձէն փոքր անասուն մըն է, բայց երբ օձը յարձակի դաշտամուկին վրայ, դաշտամուկը, ինքզինք մեծ կենդանի ձեւացնելու համար, ետեւի ոտներուն վրայ կը կանգնի եւ կը նչայ՝ օձին վրայ սարսափի ազդեցութիւն բանեցնել փորձելով, մինչ, միաժամանակ, զգուշաւորութեամբ փախուստի միջոց մը կը փնտռէ:

Քիլտիրը թռչուն մըն է, որուն եթէ գիշատիչ անասուն մը հանդիպի, ան բոյնէն ու ձագերէն կը հեռանայ. գետին կը պառկի թեւերը փռելով եւ թելը կոտրած ձեւացնելով: Երբ գիշատիչ անասունին ուշադրութիւնը իր վրայ կեդրոնանայ, կը սկսի թռչկոտիլ ու իր բոյնէն ու ձագերէն աւելի կը հեռանայ՝ մինչեւ որ գիշատիչ անասունին վտանգը հեռացնէ, ապա ինք ապահով կը թռչի:



Այս օրինակներուն նման բոլոր յատկութիւնները բնութեան կողմէ անասուններուն տրուած պարգեւներ են, որոնց շնորհիւ իրենց թշնամիներէն կը պաշտպանուին:

Ամբողջացուր:

1. Անասուններու մարմինը կրնայ ծածկուած ըլլալ ..... եւ .....
2. Կրիային պատեանը գինձ կը պաշտպանէ ..... անասուններէն:
3. Օձերու մարմինը ..... ծածկուած է:
4. Վագրին մարմնին ծածկոյթին գոյնն ու գիծերը կ'օգնեն, որ ..... մօտենայ որսին:
5. Գազանները եւ ..... թռչունները գիշակեր անասուններ են:
6. Կարգ մը կենդանիներ գիշատիչ անասուններէն պաշտպանուելու համար զանազան միջոցներու կը դիմեն: Այդ միջոցներէն են .....:
7. Գիշատիչները ..... որսալով կը սնանին:
8. Երբ որոշ անասուններու մարմնի ծածկոյթին գոյնը կամ գիծերը շրջապատին պատշաճին, այդ երեւոյթը կը կոչուի .....

Տուր ֆողարկումի ուրիշ օրինակներ:

Գիշատիչ անասունի մը որսալը տեսած էս. է՞րբ եւ ո՞ւր: